



Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Զայնց Եկեղեցւոյ Ծուխ

Registered charity No. 1173403

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeoghiche.org.uk

www.styeoghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵԶՈՒԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading,

22nd March 2026

Bulletin 15/2026

Sixth Sunday of Great Lent—Advent

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 2:8-3:17

Քրիստոսով լեցուած ու կենդանացած

Չգոյշ եղէք, որ ռեւէ մէկը ձեր միտքը չգրաւէ իմաստասիրական տեսութիւններով եւ խաբերայական սին խօսքերով, որոնք մարդկային աւանդութիւններու եւ բնութեան ոյժերուն վրայ կը հիմնուին եւ ո՛չ թէ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետութեան վրայ:

Որովհետեւ մարդացած Քրիստոսի մէջ կը բնակի աստուածային բնութեան ամբողջ լիութիւնը: Եւ դուք ձեր կեանքին լիութիւնը գտաք՝ միանալով անոր, որ գլուխն է ոգեղէն աշխարհի բոլոր իշխանութիւններուն ու պետութիւններուն: Հաւատքի ճամբով երբ Քրիստոսի միացաք, դուք ձեր մեղքերը թօթափեցիք եւ Քրիստոսի թլփատութեամբ ստացած եղաք սրտի թլփատութիւնը: Մկրտուելով՝ անոր հետ միասին թաղուեցաք, եւ անոր հետ ալ յարութիւն առիք, քանի հաւատացիք Աստուծոյ զօրութեան, որ զայն մեռելներէն յարուցանեց:

Քրիստոսի հետ Աստուած ձե՛զ ալ կենդանացուց, քանի դուք հոգեւորապէս մեռած էիք ձեր մեղքերուն պատճառով, որովհետեւ անթլփատ հեթանոսներ էիք: Այո՛, Աստուած ներեց մեր բոլոր յանցանքները եւ իր իշխանութեամբ ջնջեց մեր օրինազանցութեան համար մեզի դէմ արձակուած դատապարտութեան վճիռը, զայն խաչափայտին գամելով: Այսպիսով անիկա զինաթափ ըրաւ ոգեղէն աշխարհի իշխանութիւններն ու պետութիւնները, յայտնապէս խայտառակելով ու պարտութեան մատնելով զանոնք Քրիստոսի ձեռքով, անոր յարութեան ստե՛ն:

Չգուշացում սխալ վարդապետութիւններէ

Կարեւորութիւն մի՛ տաք անոնց՝ որոնք ձեզ կը քննադատեն, թէ ինչո՛ւ չէք պահեր ուտելու եւ խմելու, տօնակատարութեանց, ամսամուտերու եւ Ծաբաթ օրերու վերաբերող կանոնները. որովհետեւ այդ բոլորը գալիք իրականութեանց շուքն են, իսկ իրականութիւնը Քրիստոսի մէջ է:

Չըլլայ՝ որ ռեւէ մէկը իր կեղծ խոնարհութեամբ, հրեշտակներուն ընծայուած պաշտամունքով եւ զանազան տեսիլքներով ձեզ մոլորեցնէ եւ մրցանակէն զրկէ. որովհե— տեւ այդպիսիները մարդկային հպարտութենէ տարուած են եւ կ'ուզեն իրենք զիրենք պարտադրել ձեզի: Անոնք կապ չունին Գլուխին՝ Քրիստոսի հետ. մինչդեռ մարմինը՝ Քրիստոսի եկեղեցին, իր բոլոր յօդերով ու կապերով Գլուխին կապուած ու միացած, անկէ՛ կ'առնէ իր աճումը, Աստուծոյ կամքին համաձայն:

Քանի Քրիստոսի հետ մեռաք եւ բնութեան ոյժերու տիրապետութենէն դուրս եկաք, ինչո՛ւ կը շարունակէք ապրիլ այնպէս՝ որպէս թէ ձեր կեանքը աշխարհէն կախում ունենար, եւ կը հնազանդիք մարդոց կողմէ տրուած պատուիրաններու, ինչպէս՝ «Մի՛ մօտենար, մի՛ ուտեր, մի՛ դպչիր»: Ասոնք բոլորն ալ բաներ են՝ որոնք գործածութեամբ կը փնանան:

Այդպէս պատուիրողները իմաստուն կրնան թուիլ՝ իրենց բարեպաշտական ինքնակամ արտայայտութիւններով, կեղծ խոնարհութեամբ եւ անխնայ կերպով մարմինը ճնշելով, բայց այս բաները ռեւէ արժէք չունին եւ միայն մարմինը բաւարարելու կը ծառայեն:

Մեռնիլ եւ ապրիլ Քրիստոսի հետ

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

Քանի որ յարութիւն առիք Քրիստոսի հետ, այսուհետեւ ձեր ուշադրութիւնը երկինք դարձուցէք, որովհետեւ հո՛ն է Քրիստոս, Հօր Աստուծոյ կողմը նստած: Երկնաւոր բաներու մասին խորհեցէք եւ ո՛չ թէ երկրաւոր բաներու. որովհետեւ դուք այս աշխարհին համար մեռաք, որպէսզի Քրիստոսի հետ միասին ապրիք այն կեանքով՝ որ Աստուած վերապահած է ձեզի: Իսկ երբ Քրիստոս՝ ձեր կեանքը՝ յայտնուի, այն ատեն դուք ալ փառքով պիտի յայտնուիք անոր հետ:

Հին եւ նոր կեանք

Հետեւաբար մեռուցէք ձեր մէջ երկրաւոր ցանկութիւնները, այսինքն՝ ձեզմէ դուրս վանեցէք պոռնկութիւնը, պղծութիւնը, կիրքը, չար ցանկութիւնը եւ ազահութիւնը, ինչ որ կռակաւորութիւն է. որովհետեւ այդ բոլորը Աստուծոյ անհնազանդ մարդոց գործերն են, եւ Աստուած պիտի պատժէ զանոնք: Նախապէս դո՛ւք ալ այդ բոլորը կ'ընէիք, երբ տակաւին այդ ցանկութիւններով կ'ապրէիք: Բայց հիմա ձեզմէ դուրս նետեցէք այդ բոլորը.— բարկութիւնը, զայրոյթը եւ չարութիւնը: Ձեր բերանէն ոեւէ հայհոյութիւն կամ լկտի խօսք չլուի: Մուտ մի՛ խօսիք իրարու: Մոռցէ՛ք ձեր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նոր մարդ եղէ՛ք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի կարենաք զինք ճանչնալ:

Անգամ մը որ նորոգուեցաք՝ ա՛լ չկայ Հրեայ կամ հեթանոս, թլփատուած կամ անթլփատ, բարբարոս, վայրենի, ծառայ կամ ազատ. կայ միայն Քրիստոս, որ ամէն ինչ է եւ բոլորին մէջ:

Հետեւաբար, իբրեւ Աստուծոյ կողմէ ընտրուած ու սրբուած եւ իր սերը վայելող մարդիկ՝ գրթասիրտ եղէք. եղէք ողորմած, քաղցր, խոնարհ, հեզ եւ համբերատար: Իրարու հանդէպ հանդուրժող եղէք, եւ ներեցէք իրարու՝ երբ մէկը միւսին դէմ տրտունջ մը ունենաք: Ինչպէս Աստուած Քրիստոսի միջոցաւ ներեց ձեզի, այնպէս ալ դուք իրարու ներեցէք: Եւ այս բոլորին վրայ՝ աւելի սեր ունեցէք, որովհետեւ սերը ամէն ինչի ամբողջացուցիչ շաղախն է: Ձեր սիրտերուն մէջ Քրիստոսի խաղաղութիւնը թող թագաւորէ, որովհետեւ Աստուած այդ խաղաղութեան կանչեց ձեզ՝ մէկ մարմինի մէջ, որ Քրիստոսի եկեղեցին է: Ուստի շնորհակալ եղէք Աստուծոյ:

Թող Քրիստոսի խօսքը ձեր մէջ բնակի իր ամբողջ հարստութեամբ, որպէսզի կատարեալ իմաստութեամբ սոր— վեցնէք իրարու եւ իրար խրատէք, եւ սաղմոսներով, օրհ— նութիւններով ու հոգեւոր երգերով ձեր սիրտերուն մէջ շնորհակալութեամբ զԱստուած օրհներգէք: Եւ ինչ որ ալ ընէք, խօսքով թէ գործով, միշտ Տէր Յիսուսի անունով ըրէք, անոր միջոցաւ գոհութիւն յայտնելով Հօր Աստուծոյ:

[The Epistle of St Paul to the Colossians 2:8-3:17;](#)

Don't let anyone capture you with empty philosophies and high-sounding nonsense that come from human thinking and from the spiritual powers^a of this world, rather than from Christ. For in Christ lives all the fullness of God in a human body.^b So you also are complete through your union with Christ, who is the head over every ruler and authority.

When you came to Christ, you were “circumcised,” but not by a physical procedure. Christ performed a spiritual circumcision—the cutting away of your sinful nature.^c For you were buried with Christ when you were baptized. And with him you were raised to new life because you trusted the mighty power of God, who raised Christ from the dead.

You were dead because of your sins and because your sinful nature was not yet cut away. Then God made you alive with Christ, for he forgave all our sins. He cancelled the record of the charges against us and took it away by nailing it to the cross. In this way, he disarmed^d the spiritual rulers and authorities. He shamed them publicly by his victory over them on the cross.

So don't let anyone condemn you for what you eat or drink, or for not celebrating certain holy days or new moon ceremonies or Sabbaths. For these rules are only shadows of the reality yet to come. And Christ himself is that reality. Don't let anyone condemn you by insisting on pious self-

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Our Lord Jesus Christ told us in Matthew 17:24-27. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous and help to keep the doors of the St Yeghiche Armenian Church open and provide all the services.

denial or the worship of angels,^e saying they have had visions about these things. Their sinful minds have made them proud, and they are not connected to Christ, the head of the body. For he holds the whole body together with its joints and ligaments, and it grows as God nourishes it.

You have died with Christ, and he has set you free from the spiritual powers of this world. So why do you keep on following the rules of the world, such as, “Don’t handle! Don’t taste! Don’t touch!”? Such rules are mere human teachings about things that deteriorate as we use them. These rules may seem wise because they require strong devotion, pious self-denial, and severe bodily discipline. But they provide no help in conquering a person’s evil desires.

Living the New Life

Since you have been raised to new life with Christ, set your sights on the realities of heaven, where Christ sits in the place of honor at God’s right hand. Think about the things of heaven, not the things of earth. For you died to this life, and your real life is hidden with Christ in God. And when Christ, who is your *a* life, is revealed to the whole world, you will share in all his glory.

So put to death the sinful, earthly things lurking within you. Have nothing to do with sexual immorality, impurity, lust, and evil desires. Don’t be greedy, for a greedy person is an idolater, worshipping the things of this world. Because of these sins, the anger of God is coming.^b You used to do these things when your life was still part of this world. But now is the time to get rid of anger, rage, malicious behaviour, slander, and dirty language. Don’t lie to each other, for you have stripped off your old sinful nature and all its wicked deeds. Put on your new nature, and be renewed as you learn to know your Creator and become like him. In this new life, it doesn’t matter if you are a Jew or a Gentile,^c circumcised or uncircumcised, barbaric, uncivilized,^d slave, or free. Christ is all that matters, and he lives in all of us.

Since God chose you to be the holy people he loves, you must clothe yourselves with tender-hearted mercy, kindness, humility, gentleness, and patience. Make allowance for each other’s faults, and forgive anyone who offends you. Remember, the Lord forgave you, so you must forgive others. Above all, clothe yourselves with love, which binds us all together in perfect harmony. And let the peace that comes from Christ rule in your hearts. For as members of one body you are called to live in peace. And always be thankful.

Let the message about Christ, in all its richness, fill your lives. Teach and counsel each other with all the wisdom he gives. Sing psalms and hymns and spiritual songs to God with thankful hearts. And whatever you do or say, do it as a representative of the Lord Jesus, giving thanks through him to God the Father.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 22: 34-23:39

Մեծագոյն պատուիրանը (Մր 12.28-34, Ղկ 10.25-28)

Երբ Փարիսեցիները լսեցին թէ Յիսուս Սաղուկեցիները պապանձեցուց, իրարու քով եկան: Անոնցմէ մէկը, Մովսիսական Օրէնքի մասնագէտ մը, Յիսուսը փորձելու համար հարցուց.

– Վարդապետ, Օրէնքին մէջ ո՞րն է մեծագոյն պատուիրանը:

Յիսուս ըսաւ անոր.

– «Միրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ մտքովդ»: Ասիկա է մեծագոյն եւ կարեւորագոյն պատուիրանը: Երկրորդը ասորը նման է. «Միրէ՛ ընկերդ քու անձիդ պէս»: Այս երկու պատուիրաններէն կախետալ են ամբողջ Օրէնքը եւ մարգարէներու ուսուցումները:

Որո՞ն որդին է Քրիստոս (Մր 12.35-37, Ղկ 20.41-44)

Երբ Փարիսեցիները հաւաքուեցան, Յիսուս հարցուց անոնց.

– *Ի՞նչ կը խորհիք Քրիստոսին մասին: Որո՞ն Որդին է ան:*

Անոնք պատասխանեցին.

– Դաւիթի:

Յիսուս ըսաւ անոնց.

– *Որեւէն ինչպէ՛ս Դաւիթ Սուրբ Հոգիէն ներշնչուած՝ զայն Տէր կը կոչէ ու կ’ըսէ.–*

«Տէրը իմ Տիրոջս ըսաւ.– Աջ կողմս նստէ, մինչեւ որ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

Արդ, եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ինչպէ՛ս անոր որդին կ’ըլլայ:

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Ոչ որ կրցաւ պատասխան տալ Յիսուսի, եւ այդ օրուրնէ սկսեալ ռեւէ մէկը չէր համարձակեր իրեն հարցում ուղղել:

Չգուշացում Օրէնքի ուսուցիչներէն եւ Փարիսեցիներէն (Մր 12.38-39, Ղկ 11.43,46, 20.45-47)

Այա Յիսուս ժողովուրդին եւ իր աշակերտներուն ըսաւ.

– Մովսէսի այօռըր նստան Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները:

Իրենց ըսածներուն հնազանդեցէք եւ կատարեցէք զանոնք. սակայն մի՛ ընէք ինչ որ իրենք կ'ընեն. որովհետեւ անոնք կը սորվեցնեն, բայց չեն կատարեր: Անոնք ծանր եւ դժուարակիր բեռներ կը դնեն մարդոց ուսերուն, մինչ իրենք նոյն բեռները կրելու նուագագոյն ճիգն իսկ չեն ընէր: Ինչ որ կ'ընեն, մարդոց երեւելու համար կ'ընեն: Իրենց գրասպանակները կը լայնցնեն եւ իրենց հագուստներուն ծոպերը կ'երկնցնեն: Ընթրիքներու ընթացքին պատուոյ տեղերը գրաւել կը սիրեն եւ ժողովարաններու մէջ՝ առաջին այօռները: Կը սիրեն հրապարակներու վրայ մարդոցմէ բարեւներ ընդունիլ եւ «վարդապետ», այսինքն «ուսուցիչ» կոչուիլ: Բայց դուք ռեւէ մէկը «վարդապետ» մի՛ կոչէք, որովհետեւ դուք բոլորդ եղբայրներ էք եւ մէկ ուսուցիչ ունիք: Երկրի վրայ ռեւէ մէկը «հայր» մի՛ կոչէք, որովհետեւ դուք մէկ Հայր ունիք, որ երկինքի մէջ է: «Առաջնորդ» մի՛ կոչուիք, որովհետեւ ձեր միակ առաջնորդը Քրիստոսն է: Ձեր մէջէն մեծը թող ձեր սպասաւորը ըլլայ: Ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

Յիսուս կը դատապարտէ Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները (Մր 12.40, Ղկ 11.39-42)

– Կայ՛ ձեզի, կեղծաւորներ, Օրէնքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ երկինքի արքայութիւնը կը փակէք մարդոց առջեւ. դուք չէք մտներ եւ թոյլ չէք տար նաեւ անոնց՝ որ կ'ուզեն մտնել:

Կայ՛ ձեզի, կեղծաւորներ, Օրէնքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ մէկ կողմէ այրիներուն տուները իրենց ձեռքէն կը յափշտակէք, միւս կողմէ կեղծաւորութեամբ ձեր աղօթքը կ'երկարէք. սատր համար աւելի խիստ դատապարտութիւն պիտի ընդունիք:

Կայ՛ ձեզի, կեղծաւորներ, Օրէնքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ մէկ կողմէ ծով ու ցամաք կը շրջիք մէկը նորահաւատ ընելու համար, իսկ երբ յաջողիք՝ զայն ձեզմէ կրկնապատիկ աւելի դժոխքի արժանի կ'ընէք:

Կայ՛ ձեզի, կոյր առաջնորդներ: Կ'ըսէք. «Ան որ տաճարին վրայ կ'երդնու՝ երդումը կատարելու պարտաւորութեան տակ չէ, բայց ան որ տաճարին ուսկիին վրայ կ'երդնու՝ պարտաւոր է կատարելու»: Յիմարներ, կոյրեր, ո՛ր մէկը կարելոր է, ուսկի՛ն թէ տաճարը, որ կը արբագործէ ուսկին: Կամ կ'ըսէք. «Ան որ գոհարանին վրայ երդում կ'ընէ՝ երդումը կատարելու պարտաւորութեան տակ չէ, բայց ան որ կ'երդնու գոհարանին դրուած գոհին վրայ՝ պարտաւոր է կատարելու»: Յիմարներ, կոյրեր, ո՛ր մէկը աւելի կարելոր է. գո՛հը թէ գոհարանը, որ կը արբագործէ գոհը: Հետեւաբար, ով որ կ'երդնու գոհարանին վրայ, կ'երդնու թէ՛ գոհարանին եւ թէ՛ հոն եղածներուն վրայ: Ով որ կ'երդնու տաճարին վրայ, կ'երդնու թէ՛ տաճարին եւ թէ՛ Աստուծոյ վրայ, որ հոն կը բնակի: Նոյնպէս, ով որ կ'երդնու երկինքին վրայ, կ'երդնու թէ՛ Աստուծոյ գահին եւ թէ՛ Աստուծոյ վրայ, որ հոն կը նստի:

Կայ՛ ձեզի, կեղծաւորներ, Օրէնքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ անանուխին, սամիթին ու չամանին տասանորդը կու տաք եւ կ'անտեսէք Օրէնքին կարելոր պարտաւորութիւնները, այսինքն՝ արդարութիւնը, ողորմութիւնը եւ հաւատարմութիւնը: Ասոնք պէտք էր գործադրել, առանց միւսները անտեսելու: Կոյր առաջնորդներ, մէկ կողմէ մժողովր կը քամէք, միւս կողմէ սակայն ուղտը կը կլլէք:

Կայ՛ ձեզի, կեղծաւորներ, Օրէնքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ պնակին եւ գաւաթին արտաքինը կը մաքրէք, մինչ գիտէք թէ ներսիդին եղող ուտելիքն ու խմելիքը ինչ յափշտակութեամբ եւ աղտոտութեամբ ձեռք բերած էք: Կոյր Փարիսեցի, նախ գաւաթին եւ պնակին ներսը մաքրէ. այսպիսով դուրսն ալ մաքուր կ'ըլլայ:

Կայ՛ ձեզի, կեղծաւորներ, Օրէնքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ կը նմանիք կիրով ճերմկուած գերեզմաններու, որոնք արտաքնապէս գեղեցիկ կ'երեւին, բայց ներքնապէս լեցուն են մեռելներու ոսկորներով եւ ամէն տեսակի պղծութեամբ: Նոյնպէս էք դուք. արտաքնապէս մարդոց արդար կ'երեւիք, բայց ներքնապէս լեցուն էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ:

Կայ՛ ձեզի, կեղծաւորներ, Օրէնքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ մարգարէներու շիրիմները կը շինէք եւ արդարներուն գերեզմանները կը զարդարէք ու կ'ըսէք. «Եթէ մենք մեր հայրերուն ժամանակը սպրած ըլլայինք, մարգարէներու սպանութեան մասնակից պիտի

չորայինք»։ Ահաւասիկ դուք արդէն իսկ կը վկայէք թէ որդիներն էք անոնց, որոնք մարգարէները կոտորեցին։ Գացէք անբողջացուցէ՛ք ձեր հայրերուն կիսատ ձգած գործը։ Օձե՛ր, իժերո՛ւ ծնունդներ, ինչպէ՛ս պիտի կարենաք փախուստ տալ դժիքի դատասպարտութենէն։ Ահա եւ ձեզի մարգարէներ, իմաստուններ եւ Օրէնքի ուսուցիչներ պիտի դրկեմ, դուք անոնցմէ ոմանք պիտի սպաննէք, ոմանք խաւէք, ուրիշներ ժողովարաններու մէջ պիտի զանակոծէք եւ հարածէք քաղաքէ քաղաք։ Այսպիսով բոլոր արդարներուն սպանութեան մասնակից եղած պիտի ըլլաք, սկսեալ անանդ Աբէլի արիւնէն մինչեւ արիւնը Բարսաբիայի որդիին՝ Չաքարիայի, որ սպաննեցիք տանարիին եւ զոհարանին մէջտեղ։ Հաստատ գիտցէք, թէ այս բոլոր ոճիրներուն պատիժը պիտի կրէք։

Յիսուսի սերը Երուսաղէմի հանդէպ (Ղկ 13.34-35)

–Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կը կոտորէիր մարգարէները եւ կը քարկոծէիր Աստուծոյ քեզի դրկած մարդիկը. քանի՛ անգամ ուզեցի որդիներդ հաւաքել, ինչպէս հաւր իր ձագերը կը հաւաքէ թներուն տակ, բայց դո՛ւք, Երուսաղէմի բնակիչներ, չուզեցիք։ Ահա «աւերակ պիտի ըլլայ ձեր տունը»։ Բայց կ'ըսեմ նսեւ, ա՛յ պիտի չտեսնէք զիս, մինչեւ որ ըսէք. «Օրհնեալ ըլլայ ան՝ որ կու գայ Տիրոջ անունով»։

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 22: 34-23:39

The Most Important Commandment

But when the Pharisees heard that he had silenced the Sadducees with his reply, they met together to question him again. One of them, an expert in religious law, tried to trap him with this question: “Teacher, which is the most important commandment in the law of Moses?”

Jesus replied, “*You must love the LORD your God with all your heart, all your soul, and all your mind. ’e This is the first and greatest commandment. A second is equally important: ’Love your neighbor as yourself. ’f The entire law and all the demands of the prophets are based on these two commandments.*”

Whose Son Is the Messiah?

Then, surrounded by the Pharisees, Jesus asked them a question: “*What do you think about the Messiah? Whose son is he?*”

They replied, “He is the son of David.”

Jesus responded, “*Then why does David, speaking under the inspiration of the Spirit, call the Messiah ‘my Lord’? For David said,*

‘The LORD said to my Lord, Sit in the place of honor at my right hand until I humble your enemies beneath your feet. ’g Since David called the Messiah ‘my Lord,’ how can the Messiah be his son?’”

No one could answer him. And after that, no one dared to ask him any more questions.

Jesus Criticizes the Religious Leaders

Then Jesus said to the crowds and to his disciples, “*The teachers of religious law and the Pharisees are the official interpreters of the law of Moses.a So practice and obey whatever they tell you, but don’t follow their example. For they don’t practice what they teach. They crush people with unbearable religious demands and never lift a finger to ease the burden.*

“Everything they do is for show. On their arms they wear extra wide prayer boxes with Scripture verses inside, and they wear robes with extra long tassels.b And they love to sit at the head table at banquets and in the seats of honor in the synagogues. They love to receive respectful greetings as they walk in the marketplaces, and to be called ‘Rabbi.’c

“Don’t let anyone call you ‘Rabbi,’ for you have only one teacher, and all of you are equal as brothers and sisters.d And don’t address anyone here on earth as ‘Father,’ for only God in heaven is your Father. And don’t let anyone call you ‘Teacher,’ for you have only one teacher, the Messiah. The greatest among you must be a servant. But those who exalt themselves will be humbled, and those who humble themselves will be exalted.



Proud Pharisee

“What sorrow awaits you teachers of religious law and you Pharisees. Hypocrites! For you shut the door of the Kingdom of Heaven in people’s faces. You won’t go in yourselves, and you don’t let others enter either.e

“What sorrow awaits you teachers of religious law and you Pharisees. Hypocrites! For you cross land and sea to make one convert, and then you turn that person into twice the child of hell if you yourselves are!

“Blind guides! What sorrow awaits you! For you say that it means nothing to swear ‘by God’s Temple,’ but that it is binding to swear ‘by the gold in the Temple.’ Blind fools! Which is more important—the gold or the Temple that makes the gold sacred? And you say that to swear ‘by the altar’ is not binding, but to swear ‘by the gifts on the altar’ is binding. How blind! For which is more important—the gift on the altar or the altar that makes the gift sacred? When you swear ‘by the altar,’ you are swearing by it and by everything on it. And when you swear ‘by the Temple,’ you are swearing by it and by God, who lives in it. And when you swear ‘by heaven,’ you are swearing by the throne of God and by God, who sits on the throne.

“What sorrow awaits you teachers of religious law and you Pharisees. Hypocrites! For you are careful to tithe even the tiniest income from your herb gardens,g but you ignore the more important aspects of the law—justice, mercy, and faith. You should tithe, yes, but do not neglect the more important things. Blind guides! You strain your water so you won’t accidentally swallow a gnat, but you swallow a camel!h

“What sorrow awaits you teachers of religious law and you Pharisees. Hypocrites! For you are so careful to clean the outside of the cup and the dish, but inside you are filthy—full of greed and self-indulgence! You blind Pharisee! First wash the inside of the cup and the dish,i and then the outside will become clean, too.

“What sorrow awaits you teachers of religious law and you Pharisees. Hypocrites! For you are like whitewashed tombs—beautiful on the outside but filled on the inside with dead people’s bones and all sorts of impurity. Outwardly you look like righteous people, but inwardly your hearts are filled with hypocrisy and lawlessness.

“What sorrow awaits you teachers of religious law and you Pharisees. Hypocrites! For you build tombs for the prophets your ancestors killed, and you decorate the monuments of the godly people your ancestors destroyed. Then you say, ‘If we had lived in the days of our ancestors, we would never have joined them in killing the prophets.’

“But in saying that, you testify against yourselves that you are indeed the descendants of those who murdered the prophets. Go ahead and finish what your ancestors started. Snakes! Sons of vipers! How will you escape the judgment of hell?

“Therefore, I am sending you prophets and wise men and teachers of religious law. But you will kill some by crucifixion, and you will flog others with whips in your synagogues, chasing them from city to city. As a result, you will be held responsible for the murder of all godly people of all time—from the murder of righteous Abel to the murder of Zechariah son of Berekiah, whom you killed in the Temple between the sanctuary and the altar. I tell you the truth, this judgment will fall on this very generation.

Jesus Grieves over Jerusalem


“O Jerusalem, Jerusalem, the city that kills the prophets and stones God’s messengers! How often I have wanted to gather your children together as a hen protects her chicks beneath her wings, but you wouldn’t let me. And now, look, your house is abandoned and desolate.j For I tell you this, you will never see me again until you say, ‘Blessings on the one who comes in the name of the LORD!’k”

Announcement.

We would like to inform our Parishioners and Armenian Community that Daylight Saving Time starts on Palm Sunday when the clocks go forward one hour.

Kindly note that Palm Sunday Divine Liturgy will start at 11:00 am at the new time.

Thank you



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ ՍՈՍԿԱԼԻ ԶԱՐԶԱՐԱՆՔՆԵՐԻ ՈՒ ՎԻՐԱԿ ՄՏՆԵԼՈՒ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Այս տոնը հայոց առաջին հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորչի հիշատակության երեք տոներից առաջինն է տարվա ընթացքում: Ըստ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու տոնացույցի՝ նշվում է Մեծ պահքի 6-րդ կիրակիի նախորդ շաբաթ օրը: Տոնը կատարվում է ի հիշատակություն Խոր Վիրապում Ս. Գրիգոր Լուսավորչի կրած չարչարանքների: Ըստ պատմական աղբյուրների՝ Ս. Գրիգոր Լուսավորչին Անակ Պարթևն իշխանի որդին էր:



Սպանելով հայոց Արշակունի Խոսրով թագավորին, Անակ Պարթևը սպանվում է հայ իշխանների կողմից: Որդին՝ Գրիգորը, մեծանում և կրթություն է ստանում Կեսարիայում՝ դաստիարակվելով իբրև բարեպաշտ քրիստոնյա: Հետագայում դառնում է Խոսրով արքայի որդու՝ Տրդատ թագավորի արքունի դիվանապետը: Սակայն տեղեկանալով, որ Գրիգորը քրիստոնյա է, ինչպես նաև արքայասպան Անակի որդին, Տրդատ արքան նրան չարչարանքների է ենթարկում և նետում Խոր Վիրապի ստորգետնյա գնդանը: 4-րդ դարի Ընդհանրական Եկեղեցու սուրբ Հովհան Ոսկեբերան հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված իր ներբողում գրել է. «Հիշեք և նրա համբերությունը խոր վիրապի մեջ, որքան էր նեղություններով դառնացած... Իսկ ո՞վ կարող է խոսքով պատմել երանելու անսահման ճգնության մասին, կամ օրինակով ցույց տալ նրա անտանելի նեղությունը, որ ապրում էր իժերի և քարբերի մեջ, որտեղ ոչ գրուցակից կար, ոչ վշտակցող բարեկամ, ոչ օգնական, ոչ մխիթարող և ոչ ծառայող: Նա համբերում էր մեծ ժուժկալությամբ, իբրև կենդանի դրված գերեզմանի մեջ, անտուն, մերկ, գիշեր-ցերեկ, ամռան շոգին և ձմռան սառնամանիքին, քանզի մոտ էր Աստծուն»:

Խոր վիրապում կրած 13 տարիների չարչարանքներից հետո Ս. Գրիգոր Լուսավորչը, դուրս գալով ստորգետնյա գնդանից, Քրիստոսի լույսն է տարածում հայոց աշխարհում՝ դառնալով պետականորեն ճանաչված Հայ եկեղեցու առաջին հովվապետը: Ս. Գրիգոր Լուսավորչի հիշատակը, իբրև համաքրիստոնեական սուրբ, տոնում են նաև քրիստոնյա մյուս եկեղեցիները:

COMMEMORATION OF ST. GREGORY THE ILLUMINATOR'S TORMENTS AND COMMITMENT TO THE PIT

This feast is the first one among the three commemoration days dedicated to the memory of St. Gregory the Illuminator, the first Catholicos of All Armenians. According to the Armenian Church Calendar, it is celebrated on the eve of the Fifth Sunday during the period of Great Lent. The feast is dedicated to the torments which St. Gregory suffered during his imprisonment.

According to historical sources, St. Gregory the Illuminator was the son of Anak Partev, a knight and nobleman, who killed the Armenian King Khosrov Arshakouni. In retaliation, Anak is executed by the Armenians. His son, Gregory, lived and studied in Caesarea, and was brought up as a pious Christian. Gregory returns to Armenia as an adult and becomes a member of the royal court. King Tiridates (Trdat), the son of King Khosrov and heir to the throne, appoints Gregory as the Chancellor of the Armenian Kingdom. Tiridates, learning that Gregory is a Christian and the son of Anak, subjects him to severe tortures and commits Gregory to death, by imprisoning him in a deep underground pit.

In 301 A.D., after spending 13 years in the pit, St. Gregory the Illuminator is freed from the dungeon and emerges to spread the Light of Christ in Armenia. He thus becomes the first pontiff of the Armenian Church, baptizes the royal family, and evangelizes the whole of the Armenian Nation. Armenia becomes the first nation in the world to officially proclaim Christianity as her state religion.

St. Gregory the Illuminator is recognized by all of Christendom as a Saint, and he is commemorated in all traditional Christian Churches.

ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի վեցերորդ կիրակին կոչվում է Գալստյան: Այս կիրակին Հիսուս Քրիստոսի Առաջին Գալստյան՝ մարդեղության հիշեցումն է: Հաստատվեց այն ճշմարտությունը, որ Փրկչի Գալստյամբ հնարավորություն ընձեռնվեց մարդկությանն առաջնորդվել փրկության ուղով: Այս կիրակին միևնույն ժամանակ Երկրորդ Գալստյան խորհուրդն ունի: Ավետարաններում և առաքյալների թղթերում Երկրորդ Գալստյանը նվիրված բազում հատվածներ կան: Տերը զգուշացնում է Երկրորդ Գալստյան և դրա նախանշանների մասին. «Չզույշ եղեք, զուցե մեկը ձեզ խաբի, որովհետև շատերը կգան իմ անունով ու կասեն, թե՛ ես եմ Քրիստոսը. և շատերին կմոլորեցնեն: Լսելու եք պատերազմների ձայներ և պատերազմների լուրեր... Ազգ ազգի դեմ պիտի ելնի, և թագավորությունը՝ թագավորության դեմ, և պիտի լինեն սով, համաճարակ ու տեղ-տեղ երկրաշարժներ: Սակայն այս ամենը սկիզբն է երկանց ... Եվ բազում սուտ մարգարեներ պիտի ելնեն ու շատերին պիտի մոլորեցնեն: Եվ անօրինության շատանալուց՝ շատերի սերը պիտի ցամաքի: Բայց ով մինչև վերջ համբերեց, նա պիտի փրկվի» (Մատթ. 24:4-13): Գալստյան կիրակիի խորհուրդը համբերության, բարեպաշտության, առաքինության կոչն է, որովհետև հոգու բյուրեղացմամբ և ճշմարիտ հավատով մարդ կարող է սպասել Տիրոջ Հրաշափառ Գալստյանը:

SUNDAY OF ADVENT

The Sixth Sunday of Great Lent is called the Sunday of Advent. This Sunday teaches us about the first Advent of Christ – His Incarnation: His Holy Birth when God became Man. This proved the Truth found in the Scriptures that by the coming of the Savior, a second chance was given to mankind to be guided on the path leading towards salvation.

This Sunday also symbolizes the Second Advent. In the Gospels and Apostolic Letters there are many references dedicated to the Second Advent, where our Lord warns us about His return. In the Gospel of St. Matthew, Christ says, “... Watch out and do not let anyone fool you. Many men, claiming to speak for me, will come and say, “I am the Messiah!” and they will fool many people. You are going to hear the noise of battles close by and the news of battles far away... Countries will fight each other; kingdoms will attack one another. There will be famines and earthquakes everywhere... And you will be hated by all nations for my Name’s sake... Many false prophets will appear and fool many people. Such will be the spread of evil that many people’s love will grow cold. But whoever holds out to the end will be saved” (Mt 24:4-13).

The message of this Sunday is a call for endurance, piety and modesty. Through these we can patiently wait for the Glorious Resurrection of Christ, the purification of our souls and the triumph of the True Faith. All Christian Churches celebrate the feast of the Sunday of Advent.



DAILY BIBLE READINGS FOR 2026 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

23 March	Daniel 7:2-27; 1 Corinthians 12:1-7
24 March	1 Corinthians 12:8-27
25 March	Exodus 4:21-5:3; Zechariah 9:9-16
26 March	Ezekiel 37:1-14; 1 Timothy 3:14-16
27 March	Deuteronomy 11:10-25; Job 21:1-34; Isaiah 46:3-47:4
28 March	Remembrance of Christ’s Raising Lazarus Proverbs 14:27-35; 1 Thessalonians 4:12-17; John 11:55-12:11



**Dear Parishioners
and
Armenian Community Members**

St Yeghiche Armenian Church, has published its 2026 wall calendar, with both Armenian Religious Feast dates and U.K. holiday dates.

These are out for sale at St Yeghiche Armenian Church, from this Sunday 30th November, 2025 and till stock lasts.

We encourage every Armenian household to have one, and bring our Lords blessing to your home and family.

**Thank you for your support
St Yeghiche Armenian Church Parish Council**

Announcement:

Dear St Yeghiche Armenian Church Parishioners and community members, on Sunday 29th March we will be celebrating the triumphant entry of our Lord Jesus Christ to Jerusalem (Palm Sunday). If you would like to make any donations towards the palm leaf crosses and Olive branches which will be blessed and distributed to all, please contact members of the Parish Council at the entrance of the church or use our electronic donation detail mentioned on the last page of this Sunday Bulletin. Thank you

Thank You

St Yeghiche Armenian Church Parish Council together with Rev Fr Nshan Alaverdyan, would like to thank the Ladies Guild members for their dedication and superb presentation of delicious Armenian traditional Lent dishes for Michink, which was on Wednesday 11th March 2026 at Diocesan Centre. More than 60 members of our Armenian Community who attended were impressed and thanked the organising committee. We also would like to thank every and all the donors for their gifts. The raised funds will be used for St Yeghiche Armenian Church running expenses. We invite ladies of our Parish to join and enjoy the warm and collective opportunity the Ladies Guild offer.

Announcement

Dear St Yeghiche Parish Registered Members,

We are pleased to inform you that our Annual Parish General Assembly meeting (AGM) will take place on 22nd March 2026 at St Yeghiche Armenian Church at 1:30 pm.

As stated in our constitution all registered members are encouraged and should participate at this Annual Parish Assembly meeting provided they have paid their Parish Contribution for the year and up to 2025.

Being this an election year your attendance is extremely important to evaluate and support your Parish and its Council who have collectively volunteered to run the activities at the church and within your Parish and elect a new council.

We look forward seeing you all. **St Yeghiche Armenian Church Parish Council**

3: This week's message from our Priest in Charge

Մեկնություն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցումից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Չգո՛ջ եղէք, չի՛նի թէ մէկը ձեզ գրաւի ճարտարամտութեամբ եւ սնտոխ խաբէրայութեամբ. դրանք մարդկային աւանդութեան եւ բնութեան տարերային ուժերի վրայ են հիմնուած եւ ոչ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետութեան վրայ» (Կող. 2:8):

Քրիստոսի Գալուստով փրկուած հարազատներ,

Եթէ մեզ հարցնեին՝ կուգենայի՞նք հէնց վաղը Փրկիչը գար, խուսափո՞ւմ, թէ հաճոյքով ենք մտածում Քրիստոսի երկրորդ գալուստի, մեր պատասխանը իւրովի գնահատական կը լինէր մեր հոգեւոր վիճակի: Իսկապէս, լուրջ հարցադրում է՝ այօրուայ քիստոնեայ աշխարհը, ես, մենք, մեր համայնքը, պատրա՞ստ ենք կամ գոնէ պատրաստո՞ւմ ենք այն գալուստին, որի մասին ամէն օր ենք խնդրում՝ ասելով. «Եկեացէ արքայութիւն Քո»: Աստուածաշունչը աւարտուում է հէնց նման խնդրանք-մաղթանքով, ուր սբ. Յովհաննէս առաքեալը գրում է. **«Ով այս մասին վկայեց, ասաց. "Ես գալիս եմ շուտով": Ամէն: Ե՛կ, Տէ՛ր Յիսուս Քրիստոս»** (Յայտն. 22.20):

«Ամէն»՝ «թող լինի» ասելով, առաքեալն իր համաձայնութիւնն է տալիս եւ անձնապէս դիմելով եկեղեցու անունից է դիմում՝ դաւանական խոստովանութեամբ՝ Ե՛կ,

Քրիստոսասէ՛ր բարեկամներ, մենք Մեծ Պահքի ապաշխարութեան շրջանով պատրաստուում ենք Քրիստոսի հետ հանդիպմանը, մեծ իմաստով՝ Իր գալստեանը: Այս շրջանը խորհրդանշականօրէն մեր ողջ կեանքն է ներկայացնում, ուր կան Աստուծոց մկրտուելու, օծումով որդեգրուելու եւ դրախտային ուրախութիւնն զգալու անուշ սկիզբ, եւ մեղքով անկում-արտաքսում, զոջումով վերադարձ եւ աղօթական կազդուրում, ողորմութեամբ ու առաքինի կեանքով հաստատում եւ Շնորհի մէջ անելու հրաւեր: Մեղքի դիմաց մահացող մարդը չէր կարող ապաշխարութեամբ նման վերադարձ ունենալ առանց Փրկիչ Քրիստոսի:

Շարաթ առ շարաթ Մեծ Պահքի ընթացքը մեզ հասունացնում է ապաշխարութեան այն հանգրուանին, ուր մենք, մաքրուելով բարու անունով մատուցուած մեղքի վարակից, կարող ենք լինում ինքնաքննութեան, ինքնահրաժարումի ճանապարհով վերագտնել մեր աստուածաստեղծ իրական «ես»-ը, վերականգնել Աստուծոյ պատկերը մեր մէջ: Սա հեշտ չէ, ինչպէս փաստում են իրենց ներսում այս պայքարն անցած անձինք: Աւելի հեշտ է մեր անձից դուրս պայքարը, քան մեր անձի ներսում սիրելի դարձած մեր կրքերի ու չերեւացող մեղքերի դեմ:

Քրիստոսի՝ օրուայ օրինակելի հաւատացեալ ներկայացող օրէնսգէտներին, փարիսեցիներին եւ կրօնական առաջնորդներին ուղղուած «վայերը» միայն իրենց ուղղուած չեն, այլ նաեւ մեզ: Սա այնքանով է կարեւոր, որ հոգեւոր ուսուցիչների եւ հայրերի խօսքով ու օրինակով է Աստուծոյ խօսքի գործադրումը արգելակւում կամ յաջողում: Օրինապաշտ հրէաների օրինակը մեզ սթափեցնող պիտի լինի, քանի որ հէնց նման հոգեւոր խեղաթիւրման պատճառով իրենց հոգեւոր աչքերը չը կարողացան Յիսուսի կերպարի մէջ ճանաչել եւ ընդունել երկար սպասուած Մեսիային՝ Քրիստոսին:

Պօղոս առաքեալի զգուշացնող կոչն էլ նոյն մտքով է, որ ճարտար խօսքերով, մարդկային աւանդութեան՝ գիտականութեան պաշտամունքով, պերճախօս քարոզչութիւններով մեր ուշադրութիւնը որեւէ մէկը չը կարողանայ շեղել Քրիստոսից: Մեզ առաջարկւում են փրկութիւններ գիտութենապաշտութեամբ, սոցիալական շարժումներով, բժշկական միջամտութիւններով, տնտեսական ու քաղաքական տեսութիւններով: Այսօրուայ զանազան գիտական դպրոցներն էլ մարդկային աւանդութեան վրայ ենք հիմնուած, իսկ ճարտասան լեզուն կարող է դատարկը, խաբկանքը ճշմարտութեան անունով ներկայացնել: Մեզ համար յստակ պիտի լինի չափորոշիչը. մեզ մատուցուածը ճշմարտութիւն կարող է լինել, եթէ հիմնուած են դրանք միակ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետութեան վրայ:

Աստուած մեզ ուղղափառ հաւատքի, առաքինի կեանքի, բարի գործերի եւ Իր հետ Սուրբ Հաղորդութեան մէջ պահի եւ անեցնի՝ արժանաւոր կերպով գնահատելու Իր առաջին խոնարհ գալուստը եւ պատրաստուելու Իր երկրորդ ու փառաւոր գալուստին: Ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան



St Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Զայոց Եկեղեցւոյ Ծուխ

Registered Charity No 1173403

St Yeghiche Armenian Church Parish Ltd, 13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB
t. +44 20 7373 8133 e. info@styeghiche.org.uk f. <https://www.facebook.com/StYeghiche> w. www.styeghiche.org.uk



Holy week Timetable at St Yeghiche Armenian Church

Սբ. Եղիշէ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԱԲԱԳ ՇԱՐԱԹՈՒ 2026

- | | | |
|------------------------|--|-------------------|
| Palm Sunday | ԾԱՂԿԱԶԱՐԴ | 29th March |
| 11:00 | Divine Liturgy / Սուրբ Պատարագ | |
| 1:30 | Opening of the Doors / Դռնբացէք | |
| Maundy Thursday | ԱԲԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ | 2nd April |
| 17:30 | Washing of the Feet / Ունկուսայ | |
| | We encourage parents to register the names of their boys with the Priest and Parish Council Members for this act. | |
| 19:30 | Grand Vigil Betrayal Service/ Խաւարում | |
| Good Friday | ԱԲԱԳ ՈՒՐԲԱԹ | 3rd April |
| 16:00 | Evening Burial Service / Կարգ Թաղման Յիսուսի Քրիստոսի Procession around the Church. | |
| Holy Saturday | ՃՐԱԳԱԼՈՅՑԻ Սբ. ՊԱՏԱՐԱԳ | 4th April |
| 15:00 | Scripture readings/ Ճաշու ընթերցումներ | |
| 16:30 | Eucharist and Holy Communion/ Բուն Պատարագ | |
| 18:30 | Blessing of home / Տնօրհնէք | |
| Easter Sunday | ՉԱՏԻԿ. Սբ. ՅԱՐՈՒԹԻԻՆ | 5th April |
| 11:00 | Episcopal Divine Liturgy . Եպիսկոպոսական Սբ. Պատարագ (Պատարագիչ՝ տ. Յովակիմ եպս. Մանուկեան) | |
| Monday | ՄԵՌԵԼՈՑ | 6th April |
| 11:00 – 14:00 | Blessing of the Graves / Այցելութիւն գերեզմանատուն A clergy will be available at Gunnersbury Cemetery to conduct individual prayers. If you require prayers at any other cemetery, please contact us to arrange with the Clergy. | |

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Rest of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Dr Zara Hovsepian for the soul of her recently departed dear Brother the late **DAVID HOVSEPYAN**, also for all the old and new deceased members of the **HOVSEPYAN** Family

By Avedis, Simon, Garo and Jennifer Nercessian and Zaza Balian for the soul of their Parents who were also a loving Grandparents the late **ARMENAG** and **YESTER NERCESSIAN**, also for all the old and new deceased members of the **NERCESSIAN** and **BALIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs
Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us **before Thursday Evening**. Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.

Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;

- By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
- By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
- By electronic card reader at the Church entrance.
- By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.



St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.

Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk